ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԿԴՄՀՀ-ԷԱՃԾՁԲ-26/7 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **18.02.2026թ.**

09.02.2026-18.02.2026թթ. ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ **անվտանգության ապահովման ծառայությունների (պահնորդային ծառայություններ)** ձեռքբերման **ԿԴՄՀՀ-ԷԱՃԾՁԲ-26/7** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Է. Ղուկասյան	Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի անվտանգության և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ղեկավար՝ նախագահ,
Դ. Մկրտչյան	«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի SS ծառայության պատասխանատու՝ անդամ,
Մ. Ղուկասյան	«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի տնտեսական և սպասարկման վարչության ղեկավար՝ անդամ,

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Է. Ղուկասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ն. Բոյաջյանը՝ «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի գնումների համակարգող՝ քարտուղարը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման ծառայությունների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ.-ի փետրվարի 09-ին, ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի շենքում ժամը 15:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման ծառայության վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Աճուրդի մեկնարկային գին	Մեկնարկ	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	անվտանգության ապահովման ծառայություններ	58327000 AMD	2026-02-10 15:00:00	70000000

ԿԴՄՀՀ-ԷԱՃԾՁԲ-26/7 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի վերաբերյալ տվյալներ
1	«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ	ՀՎՀՀ՝ 01529671, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Հեքիմյան փ./ 1տ. հեռ.՝ +374 99 199 961, էլ. հասցե՝ info@armobil.am
2	«Գվարդիա 2022» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01040781, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան Փ./Շ/5/38 բն., հեռ.՝ +374 77 01 14 84, էլ. հասցե՝ gvardia.2022@mail.ru
3	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00191157, հասցե՝ ՀՀ, Նոր Խարբերդ 10, 13/2, հեռ.՝ +374 98 47 00 40, էլ. հասցե՝ king-marshal@mail.ru
4	«Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01237427, հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Խանջյան 13/3 հեռ.՝ +374 41 51 71 31, էլ. հասցե՝ tavros060705507@gmail.com,

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունը.

«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՍՊԸ-ն սույն գնման ընթացակարգի մասնակցության հայտով ներկայացրած հայտի ապահովման վավերականության ժամկետը նշված է՝ 90 (իննսուն) աշխատանքային օր: Ընդ որում հրավերով սահմանված է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշվված 90 (իննսուն) աշխատանքային օր: Եթե ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի

հիման վրա, և ընթացակարգով նախատեսվող ծառայության պլանային ընդհանուր գինը գերազանցում է 25,000,000 ՀՀ դրամը, ապա հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշվված 120 (մեկ հարյուր քսան) աշխատանքային օր:

Հետևաբար՝ **«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՍՊԸ-ի** հայտը մերժվում է՝ ըստ հրավերի 1-ին մասի 7.6-րդ կետի:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Ընթացակարգը հայտարարվել է չկայացած,համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ,այն է՝ պայմանագիր չի կնքվում:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Է. Ղուկասյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Դ. Մկրտչյան _____

Մ. Ղուկասյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ն. Բոյաջյան _____